

135

ԲԺԻՇԿ ՍԻՐԷՑԻ ՇԱՀ-ՆԱԶԱՐԵԱՆՑ

ԲԱՆԱՍՏԵՂԾ-ՔԱՂԱՔԱՑԻՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՆԻՐԱԿԱՆ ՈՒԽՏԻ ԱՄՊԱՐԷԶՈՒՄ

(Ասւած է 1907 թւի դեկտեմբերի 30-ին, Մոսկուայի
Էկեղեցուծ, Սճբար Շահ-Ազիլի թաղման օրը)

«Ես ուխտեցի լինել մշակ
Հասարակաց պիտույքի...»
Սմբատ Շահ-Ազիլի
«Կեցցէ սուրբ գործը»

ՍՄԲԱՏ ՇԱՀ-ԱԶԻԻՑԻ ՊԱՏԿԵՐՈՎ



Էլեբարաշարժ տպարան Ե. Աւետիսեանի, Մոսկա.
1908.

891.99.092 Շահազիլ
Ը-21

NOV 2011

391.99.092 Հահուպի

Ե-21

պ-

ԲԺԻՇԿ ՍԻՄԷՐՈՆ ՇԱՀ-ՆԱԶԱՐԵԱՆՑ


ԲԱՆԱՍՏԵՂԾ-ՔԱՂԱՔԱՑԻՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՆԻՒՐԱԿԱՆ ՈՒԽՏԻ ԱՄՊԱՐԷԶՈՒՄ

(Ասւած է 1907 թւի դեկտեմբերի 30-ին, Մոսկւայի
Էկեղեցուձ, Սմբատ Շահ-Ազիւնի թաղման օրը)

«Ես ուխտեցի լինել մշակ
Հասարակաց պիտոյքի...»
Սմբատ Շահ-Ազիւնի
«Կեցցէ սուրբ զործը»

ՍՄԲԱՏ ՇԱՀ-ԱԶԻՆԻ ՊԱՏԿԵՐՈՎ



Էլէքտրաշարժ տպարան Ե. Աւետիքեանի, Մոսկւա.
1908.



13 JUL 2013

70.376



Handwritten signature in cursive script, possibly reading 'M. S. ...'.

Типографія Е. Аветикова
Москва, Б. Лубянка, Варсонофьевскій пер., домъ Соловьева.



2829-50



ԲԱՆԱՍՏԵՂԾ-ՔԱՂԱՔԱՑԻՆ

ԴՊՐՈՑՄԱԿԱՆ ՆԻՒՐՄԱԿԱՆ ՈՒԽՏԻ ԱՍՊԱՐԷՉՈՒՄ

(Ասւած է 1907 թւի դեկտեմբերի 30-ին, Մոսկուայի
Էկեղեցում, ՍՋԿԿ Ծահ-Աղիղի թաղման օրը*)

«Ես ուխտեցի լինել մշակ
Հասարակաց պիտուրի»—

այգպէս է բնորոշել Ս. Ծահ-Աղիղը**) դեռ 60-ական
թւականների սկզբին իր երկրաւոր ուղին:

Բաղձաթիւ, բաղձապիտի են հասարակութեան պի-
տոյք-հոգսերը, ցաւեր-դարչերը և Ս. Ծահ-Աղիղի գործ-
վայից սիրտը նւիրեց սրանց մշակման-բարելաւման
գործին երիտասարդի զգայուն լարերի ամբողջ թափով:

Բանաստեղծ, դրական, հրապարակախօս, ուսուցիչ,
հասարակութեան նիստ ու կացի անվրէպ մասնակից
— այդ ամէն ասպարէզներում Ս. Ծահ-Աղիղը դժեց էր
գիծը:

Հասկանալի է, որ, այդ այգպէս լինելով, Ս. Ծահ-Ա-
ղիղին վերջինս ամբողջ անցեալով, ամբողջ հասակով
մօտենալու համար անհրաժեշտ են աւելի դիւրին, ա-
ւելի բարեպատէհ հանգամանքներ: Եւ ես այստեղ
դժում եմ ինձ համար միայն մի շատ համեստ խնդիր՝
— ցուցել Ս. Ծահ-Աղիղի ո՞վ լինելը կըմական - ճանկավար-

*) Արտատպւում է «Հովիւ»-ի 1908 թւի № № 1—2-ից՝
մի-երկու նոր կտորներով:

**) Ծն. 1840 թ. սեպտ. 5-ին, վախճ. 1907 թ. դեկտ. 24-ին:

Ժական իրէայլ կենտեան-ընտանեակէտից, թէ ի՞նչն է քնարող—Ս. Շահ-Աղիզին այլ ասպարէզում:

«Իսկ թէ հորիզոն բացուի կրթումեան
Կը բացուի և քեզ դուռը փրկումեան,
Նորից կը ծաղկեն քո բուրաստաններ,—
Նոր կեանք կը շնչեն մեռած անդամներ» —

այլ էր Ս. Շահ-Աղիզի՝ կրթական-մանկավարժական դորժին վերաբերեալ՝ դեռ 60-ական թւականների սկզբին դաւանած credo-ն—հաւատամբք, մի հաւատամբք, որը նա կրեց իր զբօշի վրա՝ մինչ իր երկրաւորի վերջին րոպէն:

«Եւ այգ գոչեցինք, և օդի վերայ
Դրեցինք հիմքը նորա կրթումեան,—
Եւ մեք խարեցանք, որպէս երեխայ,
Եւ Հայի վերքը մնաց անդարման:
Խաւար գրումներ, կաղ, կոյր, բնադատ
Բանաստեղծուծին և թարգմանուծին
Տուեցինք Հային, և նա յուսահատ
Փակեց ականջներ և մտաւ իւր տուն:
Զգեցէք փետուրն աղանէական,
Մերկապարանոց եկէք դուք հանդէս,—
Թո՛ղ լաւ ձանաչէ աշխարհ ամենայն,
Որ ազուա էք դուք կամ բու սևատես» —

այսպէ՛ս է շանթահարում Ս. Շահ-Աղիզին իր շրջապատը՝ խրատւած իր գուրգուրած, իր փալփալած իրէայլի և տիրոջ իրականութեան հանդիպադրութիւնից:

Սրան կից՝ շրջապատը շանթահարող Ս. Շահ-Աղիզը բացում է մեր առաջ իր անհատական սրտի վերքերն ևս: Ահա ինչպիսի՛ կակիժ է լսեցնում նա մեր սրտին

իր հայրենի («գեղեցկանիստ») Աշտարակին նւիրած բանաստեղծական հիւսւածքի տողերից՝

«Գեղեցկանիստ է Աշտարակ.
Շատ այգիներ նա ունի;
Այնտեղ երկինքն է կապուտակ,
Այնտեղ օդն է քաղցրալի:

Մե՛ծ, ընդարձակ, կանաչ դաշտեր
Լի են ծաղկով քաղցրահոտ.
Մարդահասակ, խնկանըւէր,
Բարձրանումէ այնտեղ խոտ:

«Այդ սիրուն գիւղն ունի մի գետ,
Եւ այն լի է ձկներով.
Այնտեղ իշխան և Կարմրախէտ
Խնդր են կապում խայտալով:

Եւ հարազատ այգիներից
Տարածվումէ քաղցրութիւն,
Եւ Քասախը ուրախալից
Բերում է ձեզ իւր ողջոյն:

Բայց այդ բոլորն ստրկումեան
Կաշկանդած է կապանքով.
Ժողովուրդը թշուառական
Խեղդուած է մե՛ծ խաւարով...»

Ասացի՛՛ անհատական սրտի վերք է այդ: Սակայն, իրօք, այս անդամ ևս բանաստեղծի մէջ խօսում է «ապագայի»...

Բանաստեղծ - փառաբան չունի՛ հանգիստ իր սրտի մորմորից՝

«Անցաւ ժամանակն երեւակայել
 Աւազուտ դաշտում դալար ծաղիկներ.
 Եւ դադարեցէք ցնորաբանել
 Հայի մեծումեան ոսկի երազներ:
 Մեր խաւարի մէջ մինչ գլուխ թաղած,
 Կամինք հասանել երկնի բարձրութիւն,
 Մեր բարոյապէս անջափ լետ ընկած,
 Ծխումներ մեզ խունկ և յարգոյ անուն:

Մեր զարմանումներ և ծափ ենք տալի,
 Որ Հայր զարթեց իւր երկար քնից.
 Բայց մեք չենք տեսնում այն սարսափելի
 Փոսք, որ նորան փորումն տակից;
 Եւ մեզ զովելով, և մեզ խաբելով,
 Ձե՞նք բացում արդեօք դուռը կորստեան;
 Ո՞չ անմտութեամբ, ո՞չ չար ձեռներով
 Ձգումներ կամուրջ մեր թշուառութեան:

Մաշեցինք մեր խելքն անօգուտ գործով,
 Գիշեր ու ցերեկ անպտուղ անցան,
 Մեր չխրատուեցանք անցածի սխալով,
 Եւ ձեռնարկեցինք մեր ամենայն բան;
 Ծախեցինք գրիչ ոսկու ձաձանջին,
 Վաճառեցինք սիրտ և ազնիւ հոգի.
 Լռեցաւ մեր մէջ խիղճը մարդկային,
 Եւ մնաց աւեր կեանքը հայ-ազգի...»...

**Պարզ է, որ, բոս Ս. Շահ-Աղիլի, «Կըլ-ըն-ըն» է
 այն օղբ, որով պիտի շնչի անհատը և անհատների
 համախմբումն՝ ազգը:**

«Ուսում և ուսում մեզ հարկաւոր է,
 Ուսումը լինի թող մեր թաղաւոր»—

կամ՝

«Ձէ, մեզ պիտոյ են ուսումնարաններ.
 Այլ հնար չըկայ սորա փրկութեան»—

կամ՝

«Բանի դար անցաւ, և մինչև այսօր
 Չունինք մեր դպրոց—այդ բանն առաջին»...

Սակայն, սակայն... այստեղ դարթնում է մի հարց,
 մի խնձար ծանրակշիւ հանգուց, որը շարունակ դա-
 րեր ցցւած է դիտողի առաջ, որին մօտենալու ուղին
 — նանապարհը շարունակ փնտռում են համուրէք և
 շատ քիչ անդամներ գտնում այն:

Ս. Շահ-Աղիլի հաննարը սողորւած էր իր ուշադ-
 րութիւնը դրաւած հարցին ամենակարճ նանապարհով
 մօտենալու ընդունակութեամբ: Սրան կից՝ նա ունէր
 մի առաւելութիւն ևս. նա դիտէր բաց նակատով
 զրի առնել, հրապարակի վրա դնել իր համոզմունքը—

«Ուղիղ վարժապետ, ուղիղ մտածող,
 Դաստիարակիչ մանուկ սերընդի,
 Ազգի պիտոյքը հօր պէս հոգացող—
 Յառաջ քան դպրոցն ա՛յդ պէտք է լինի»...

«Յառաջ քան դպրոցն ա՛յդ պէտք է լինի»—այդ դա-
 ւանանքն անցած դարերի ամենամտերի՛մ շշնջիւնի
 արդիւնքն է, արդի և ապագայ դպրոցական շէնքի ա-
 ռաջին հիմնաքարը:

«Ուղիղ վարժապետ, ուղիղ մտածող,
 Դաստիարակիչ մանուկ սերընդի,
 Ազգի պիտոյքը հօր պէս հոգացող»...

Ըստ էրեւթին՝ պարզ, անպանոյճ է Ս. Շահ-Աղիլի՝
 դեռ 60-ական թւականներին ընդգծած այդ շեշտ—

պահանջը, սակայն, կրկնում եմ՝ այսօր էլ, դրանք է
կրթական-դպրոցական շէնքի բանալին, այդ միակ ե-
լակէտիցն է, ուսկից պիտի դիտել կրթութեան բաց-
ւելիք զմայլիչ «հորիզոն»-ը, «փրկութեան» բացւելիք
«դրան» ծիածանը՝ և այն պահուն, երբ

«...ժպտումէ որպէս շուշան
Անհող մանուկն մօր գրկին»,

և այն պահուն, երբ

«Մտոյ հրվանին, տերեւի շրշին,
Տխուր ողբերգակ աղբիւրի շաշին;
Հաճելի դիրքը զմրուխտ կանաչով,
Մի սքանչելի գեղեցկութենով,—
Միշտ ասումեն քեզ. ո՞վ դու անցաւոր,
Ո՞վ ինքնահաւան դու ձանապարհորդ,
Ինչո՞ւ չես դալի այս հազարաւոր
Բարութեան լինել մասնակից, կցորդ»—

ու «մի քաղցր քամի» («հովտից»)

«Բերումէ իւր հետ աննշան ձայներ»

«[Թութակի երգն]» («այն խաշնարածի»), որով

«Կանչումէ գառներն հանգչել խաղերից,
Եւ պատսպարուել պատառոդ գայլից»...

Կրկին՝

«Ուղիք վարժապետ, ուղիղ մտածող,
Դաստիարակիչ մանուկ սերընդի,
Ազգի պիտոյքը հօր պէս հոգացող
Յառաջ քան դպրոցն ա՛յդ պէտք է լինի»...

Մինչեւ՝

«Ո՞վ են վարժապետը այդ անբաղդ ազգի:
Ո՞վ քարոզիչներ լուսաւորութեան:

.....
.....

Հայ ազգ, ինձ ասս, ի՞նչ վարժապետներ
Ունիս դու քո մէջ դաստիարակիչ,
Որ հատանէին խաւարի սերմեր
Քո բարօրութեան այնքան խափանիչ:

Հայ ազգ, ինձ ասս, ի՞նչ ես ինձ տանջում:—
Եւ լոռւմ է ազգ, չունի պատասխան.
Նա իւր արտասուքն է միայն սրբում,
Եւ ցոյց է տալիս վէրքը խեղձութեան»...

Բանաստեղծ-քաղաքացու 60-ական թւականների
ինքնատիպ քնարի լարերի մրմունջը, երիտասարդ ազ-
գասերի զգայուն սրտի ազէխարշ արտասուքն է այս,
մրմունջ-արտասուք, որին, սակայն, խորթ չէն վրդով-
ւած ծով-սրտի շաշիւն-ծփանքը՝

«Չայն տուր, պեղազօգ, Թէ կենդանի ես,
Ընդդէմ չարութեան դրահաւորվիր.
Մարդկութեան որդիքն, տես, անամնի պէս
Բեռնաւորուած են լծով մահակիր»...

Եւ սհա այդ «լուծ»-ը՝ իր ուրոյն տեսակում՝—

«Հայ վարժապետներ խելօք են միայն,
Որ Սաղմոս, Նարեկ սերտել են բերան,
Որ գիտեն Չամչեան քերականութիւն
Եւ ափեղ-ցփեղ ձարտասանութիւն:

Որ աշակերտի գիտեն կամք ծնշել;
Նորա մատաղ կեանքն անապատ դարձնել;
Եւ թէ այդ խեղճը օգնութիւն կանչէր,—
Ապտակ, փալախա, և զա՛ն հարկանել»...

Այդպիսով մենք մօտեցանք մեր դպրոցական գործի պատմական որոշ շերտին:

Սակայն այստեղ անկարող եմ կանգ առնել այդ հարցի վրա: Ուստի շարունակում եմ խօսքս:

Մանկավարժութեան պատմական զարգացման մեզանում անցած այդ շերտն է, որ գրաւել-չափիչաակել էր Ս. Շահ-Աղիզի քնարը 60-ական թւականներին, մի պատմաժամանակ, երբ նոյն իսկ մեր, այսպէս ասած, բարձրագոյն կրթարաններում, գորօր, Երևանի Թեմական Հոգևոր Դպրանոցում, ղեկավարւում էին կանոնադրական այսպիսի խառնաշփոթ նորմաներով՝

«Վարժապետը պարտին միշտ կռել որպէս զհասակն, նոյնպէս զչափ հասկացողութեան ուսանողաց և այնպէս որոշել զնոսին ՚ի մի գասակցութիւն, ՚ի քաջակրթիւն այլոց ուսանողաց, շանայով յամենայնի վինքն յանգուցանել զաշակերաս անխոնջ գործունէութեամբք իւրեանց, ոչ սպառնալեօք և սհացուցմամբք, այլ առւաւել համեստ թախանձանօք վարժապետական եղանակաւ և հայրական խանդաղասանօք կասեցուցանել զնոսս յամենակերպ յանցանաց ՚ի մորրութեանց և ՚ի ծուլութեանց:

«Երբև այսպիսի աշխատանք ՚ի դերև ելցեն և ոչ ևս գացի հնար ուղղելոյ հայրական խրատուք զծուլացեալսն ՚ի նոցունց և զփատաբարոյսն յաջնժամ վարժապետն առցէ ՚ի ձեռս զայլ հնարս ուղղութեան որբէն նախատինք, արժէլումն ՚ի մասնատոյ խաղոց, պատմական

հէլ ՚ի վերայ Յնգայ, լեղոյն անճաղ զբանի մի խանս, քայ ևս զմարմնական պարիժ վճահաստութեամբ վերապետելն»*):

Եւ երբ այդքան համատարած էր ախար, երբ բեարտակեղիւ հայացքով դիտում ենք 60-ական թւականների իրականութիւնը, այն է՝

«Հայ վարժապետներ խելօք են միայն,
Որ խիստ դանիժ են դասատուութան;
Որ շատ են ապրել երկրիս երեսին,
Եւ դորա համար մեծ յարգանք ունին:

Որ ծերութիւնը հիւանդոտ գունով
Խլել է վերջին գորութեան նշան,
Եւ հոգաբարձու հայրական ծայնով
Կանչում է ղոցա փոսը հանգստեան»—

այդ «երական կեանք» դիտելի՛ս՝ մենք չենք կարող չմեալ բանաստեղծ-քաղաքացու բացականչութեան՝

«Ինձ ղուք ասացէք, ո՞րքան ղոցա մէջ
Ծաղկած է հողին դաստիարակչութեան.
Զգիտեն ուսման ղեռ այբ, բէն, դա, եջ,—
Եւ ահն աժող վարժապետութեան:

Ո՞րքան հայ զաւակն ուսումնարանից
Կարող էր քաղել կրօն և հոգի:
Զէ, յոյս չկայ այդ վարժապետներից,
Հին է շինուածքը—պէտք է նորոգուի»...

«Պէտք է նորոգուի»...

* Նրանի Հ. Թ. Հ. Դպրանոցի 1860 թւի կանոնադրութեան § § 25 և 26 (Տես «Յիսնամեակ Հայոց Հոգևոր Թեմական Դպրանոցի Երևանայ», Տիփսիս, 1888 թ., էջ 302):

Սմբատ Շահ-Աղիզը, որքան ինձ յայտնի է, չունի յատկապէս մանկավարժութեան գործին վերաբերեալ ձեռնարկ: Նա նւիրեց «հին շինուածք»-ի «նորոգելու» ուխտին իր անշնական օրինակով:

Ես պատիւ եմ ունեցել աշակերտել Սմբատ Շահ-Աղիզին Մոսկուայի Լազարեան ձեմարանում 70-ական թւականների վերջերում և 80-ական թւականների առաջին կեսում: Եւ դեռ անց ժամանակ, ասել է՝ էրբ պետական դպրոցի մթնոլորդը բաւականին ժամանակ ունէր «ըստ պահանջի» կոկերու իր 16 — 24 տարւայ ուսուցիչ — պաշտօնեային, ասում եմ՝ դեռ անց ժամանակ յանձին Ս. Շահ-Աղիզի մենք՝ ձեմարանի՝ «ձերացած մօր» «անոջ ձայնից» — «համբույրից» գրկած, հայրենի «կարկաչահոս աղբիւրի» մարգարտագեղ՝ «որպէս բիւրեղ» «չստակ» թաւալն երազող սանիկներս ունէինք մի սրտացաւ «հայր», որը զիտէր ցաւել աշակերտի ցաւերով, զիտէր տարւել աշակերտութեան հողսերով, հայրական-մտերմական կապերով կապւել մեզ հետ: Եւ այդ, անշուշտ, շատ լաւ չիշում են նամանաւանդ այն ամենքը, ով զէթ կարն ժամանակ վայելել է Սմբատ Շահ-Աղիզի գութը, ի միջի այլոց, նրա մասնաւոր բնակարանում...

Ես կխուսափեմ անձնական չիշողութիւններիցս և կցիշատակեմ Ս. Շահ-Աղիզի «ուսուցչութեան» վերաբերեալ աւելի հեռւաւոր անցեալի զէպրերից զէթ հետեւալը.

Ս. Շահ-Աղիզը պատրաստական դատարանումն է: Պարսպմունք է: Աշակերտներն անուշադիր են՝ յօգնել են: Յանկարծ լաւում են ինչ-որ մեղեդիներ: Աշակերտները՝ երեւակայելով, որ բակից են զայիս այդ մեղե-

դիները՝ մի ակնթարթում դարձնում-թուզկոտում են տեղերից զէպի պատուհանները: Ս. Շահ-Աղիզին էլ հէնց այդ էր պէտք: Նա կամացուկ հանում է իր դրպանից փոքրիկ հարմոնիկա, դնում է սեղանի վրա և սկսում բացատրել հարմոնիկայի կոնսարուկցիան, իսկ ապա, մի փոքր անց, շարունակում է ընդհատած պարսպմունքը:

Օրինակը պերնախօս է ինքնին...

Մանկավարժութիւնը — ասում է մի ուսու մանկավարժ — «անհասարական գործ է», ասել է՝ մանկավարժի զերագոյն ուղեցոյցը պիտի լինի իրեն մանկավարժի «անձնական, անհատական փորձը»: Հարկաւ, այստեղ խօսքը մանկավարժական զիտութեան բարձրութեան վրա կանգնած մանկավարժի մասին է:

Ս. Շահ-Աղիզն իւրացրած ունէր մանկավարժական ժամանակակից զիտութիւնը և նա մանկավարժ էր բաւիս բռն մարտի:

Ս. Շահ-Աղիզն ապացուցեց այդ ոչ միայն իր՝ 60-ական թւականների «ժամանակակից վէպը»-ով և այլ բանաստեղծութիւններով, այլ և՛ իր, ի միջի այլոց, Վերջին տպւած զրբոյկով, սակայն այս անգամ՝ պրոզայով:

Խօսքս Ս. Շահ-Աղիզի 1903 թւին լոյս տեսած՝ «Մի քանի խօսք իմ ընթերցողներին» զրբոյկի մասին է, ուր, ի միջի այլոց, կարդում ենք՝

«... Մեր դպրոցները չեն աւանդում աշակերտին այն, որ զարգացներ նրա մէջ և զեղարուեստական նաշակ և աշխատաւորի յատկութիւն կեանքի բոլոր խաւերի համար: Մեր դպրոցը, հետեւելով արիստոկրատական կամ արիստոտէլեան դասընթացի եղանա-

կին, այսպէս ասել, Բողոք աշակերտների մէջ կամենում է տեսնել անդանդի կոչում, զեղարուեստի շնորհ, պերճախօսութեան թռիչք, մոռանալով, որ դրանց կարող են բնութենակ լինել մի քանի բնորեալներ և անբնութենակ անազին մեծամասնութիւնը: Եթէ Արիստոտէլը օրինադրել է ուսուցանելու այն, որ դարձարում է մեր կեանքը, որպիսի են իմաստասիրական — զեղարուեստական առարկաները առ հասարակ, այդ մասամբ հասկանալի է, որովհետեւ հին աշխարհը յանձինս Յոյների ներկայացնում էր «արուեստանոց», իսկ նոր աշխարհը դրա կողքին զնում է և իւր («արհեստանոց»): Հին աշխարհը հրաշքների աշխարհ էր, որ ամեն բան վերադրելով աստուածների ներդրածութեան, աշխատում էր կալանաօրէլ հողածին մարդու միւս կարողութիւնները: Նոր աշխարհը, միայն աստուածաչինը երկնքին ապով, բոլորն էլ կապում է երկրի հետ և շանք զնում այսպէս ընկալի ասլ պէս-պէս մարդկային ընդհանրապէս ընկալելիքն: Այսպէս է առաջ զնում կեանքը, բայց դպրոցը դեռ չի ուզում իւր աւանդական գիրքից հրաժարուել...» (էջ 46—47):

Ս. Շահ-Աղիզի այդ խօսքերի սողամիջում ինքնին կարգացում է արդի մանկավարժութեան լուսատու փարոս՝ Իսաբերվէզի թէզը՝

«Չարգացման իսկական ու անկեղծ սկզբունքը պահանջում է, որ դաստիարակը առձե յարգանք ինչպէս զէպի համամարդկային մարերը, այնպէս էլ զէպի մարդուս անհատական բնաւորութիւնը. պահանջում է, որ նա զարթեցնէ մանկան բնաւորութիւնը, նրա երեւան զայր, նրա անկախ գործունէութիւնը. պահանջում է բնութեան հետ համերաշխ և հէնց այդ

պատճառով երեխաներին հանելի զբաղմունք. պահանջում է արտաքին զգացմունքների զարգացումը, մարմնի և նրա օրգանների ամրութիւնը. պահանջում է այնպէս պահել յաստիարակութիւնը, որ մանուկը ինքն ամեն ինչ պէտքի, լսի, ինքն որոնի և գտնի փնտրածը. պահանջում է ճշտական շարժում իւրաքանչէր զարգացման ուղիով»)*...

Ամփոփում եմ խօսքս.

Մենք տեսանք Ս. Շահ-Աղիզին՝ դպրոցական-կրթական տիրող իրականութեան գէժ բողոքելիս. մենք տեսանք Ս. Շահ-Աղիզին՝ արդի մանկավարժութեան զերազոյն փարոսի լոյսը հայ դպրոցական գործին պատւաստելիս՝ և իր անձնական անմիջական գործունէութեամբ, և իր զրական վաստակների միջոցով: Սրան կից՝ մենք զիտենք, որ Ս. Շահ-Աղիզը՝ հաւատարիմ իր «ուխտին» —

«... լինել մշակ
Հասարակաց պիտոյքի» —

շարունակ, մինչ իր կեանքի գրեթէ վերջին րոպէն, անդոց մեռելով կրում էր մի անգամ իւրացրած դրօշակը: Ս. Շահ-Աղիզը զիտէր՝ ի՞նչ ասել է գէթ մի պահ խոնարհեցնել այդ դրօշակն երերուն «Երական կէանքի» երբեմն ամեն ինչ լափող մրրկածուփ անցողակի ալիքների առաջ: Եւ հէնց այդ փնտրակցութիւնն էր, որ զատում էր Ս. Շահ-Աղիզին այլոց շարքից և բոս ամենայնի իւրացնում նրան իրաւունք տիրանալու իր «Ժամանակակից վէպը»-ի հերոս՝ Լևոնի խօսքերին՝

*) Քաղաւմ է «Վտակ»-ի 1907 թ.ի № 19-ից (Տես Թ. Խըզմալեանի՝ «Իսաստիարակութիւնը մեր դպրոցներում» յօդածր):

3899-50



«Այն, մենք ազգ ենք և Հայի որդի
Մարդկութեան մշակ և գործակատար»...

Այն:

Ս. Շահ-Աղիզը շարունակ սասանեակ տարիներ կան-
գուն մնաց իր մի անգամ դրաւած դիրքում:

Անցեալ XIX-րդ դարի 60-ական թւականների
սկզբին հնչեցնում է իր բողոքը Ս. Շահ-Աղիզի՝

«Նանի քաղաքացի, և ապա պոլէտ»—

«ազգի ցաւի հետ» «բաժանորդ» փառք՝

«Հասաւ ժամանակ—մեր բողոքումներ»...

«Ուսման սէրն է, որ մեզ մշակում է
Մտաւոր դաշտը, հոգու անդատան;
Եւ առանց ուսման մեր կեանքը նոյն է,
Թէ անշարժութեամբ կապուած գերեզման»...

Ներկայ XX-րդ դարի սկզբին բողոքում է Ս. Շահ-
Աղիզի քնարախօս պոետը: Վերն ես արդէն բերի մի
կտոր քաղածը Ս. Շահ-Աղիզի վերջին՝ 1903 թւին
տպագրուած աշխատութիւնից: Այժմ շատապ թերթերը
Ս. Շահ-Աղիզի՝ 1901 թւին լոյս տեսած՝ «Յիշողու-
թիւններ Վարդանանց փռնի առիթով» գրքովը:

«Բարոյական կարգ և վերին մտաւորութիւններ խռո-
վարարների համար անժանօթ բաներ են:

«Ես, անկասկած, յանձն չեմ առնիլ «մեղքի կամ
անմեղութեան» տուտը դանելու... բաւական եմ հա-
մարում կրկնել Կռիլովի «Կարասի, Չուկը և Խեցի-
փինը» առակի վերջաբանը.

«Ումն է մեղքը, ով անմեղ ? —

Մեզ չէ դատել.—

Բայց հէնց այժմ էլ բեռն այնտեղ !»

«Այդ իսկ բեռը, ամենաժանր բեռը, բնկած է և
մեր թեմական գալրոցների շեմքին, որը ոչ մի ախտան
չի կարող աղբից ժաժ տալ: Արդեօք կ'ախտո՞ւն մեր
բանականութիւնը ժամանակիս փորձանքներից, թէ
էլի հակառակութեան («Էխարակը») կամ («Չահրան»),
հաստ ու բարակ մանելով, միանգամայն պէտք է փա-
թաթեն մեզ ոտով—գլխով, մինչև որ մէկը մեր այդ
կասկէ էլ բանդի ?!» (էջ 20—21)...

Կամ՝

«... մեր ազգի մէջ շատ փոքր է նշմարվում այն,
որ ասվում է վերանորոգել հոսանք: Մեր ազգային
հաստատութիւններն էլ, որ այժմ բացառապէս վերա-
բերվում են («ճողեոր Դպրանոցներին»), կրում են իրանց
վերայ նոյն անշարժութեան նշանները» (էջ 22—23)...

Կամ՝

«... Բարքերի այս աղաւաղումը... գլխաւորաբար
պէտք է վերագրել լիանջրամաշ արդիւնութեան, որի քա-
նակին դարձնել յեւն է և որը կարող էր բանալ նրա
դուները և զիտութեան հիւթով սրսկել: Դժբախտա-
բար, յայտնի է բոլորիս դարձնուած անհարմար
կանոնները, նրա մեռած ֆորմալիզմը, ժրագրիների բաբե-
լանեան խառնակութիւնները, որ աշակերտը ուսանում է
անէն բան, միայն չի ուսանում այն, որ ասելը նրան որ-
պէ կեանքը և կարարելութիւն» (էջ 56)...

Եւ այդ ամէն անգամները Սմբատ Շահ-Աղիզը բո-
ղոքում է ամենայն հարագատութեամբ իր նոյն հե-
րոս Լեոնի բմբռնման՝

«Բայց իրակ է, ոչինչ անապատ
Չէ կարող բերել պտուղ անարատ,



Յառաջ պիտոյ է նորան բարւոքել,
Եւ ապա առատ հոշնձի սպասել»...

Այլ ամէն անգամները՝

«Ազնիւ ընկեր, չը մոռանաս.

Անդաւաճան, ջերմ սիրով

Ես սիրել եմ իմ հայրենիք,—

Գինս և դու նոյն շաւղով»—

աւանդատու բանաստեղծ՝ Ս. Շահ-Աղիզը գալիս է
կրկնակի շեշտերով լսելի կացուցանելու իսկական «ա-
ղափայտ»՝ «աղբի պիտոյը»-ին ամենայն հարագատու-
թեամբ նւիրած մարտիկ սրտի բաբախուն—բողբոջ՝

«Ամէն աղբի առաջադիմութեան հասարակ ճանապարհը
է խոստովանել իւր բարոյական յաւերք և առանց ջաշ-
կելու՝ ինչ որ անց հրատարակել վերայ: Տէն մեղիքը մե-
ղանց անպակաս կ'ճանն, մեղքն որ մենք չընդունենք և
բոսայէաբար մրաջելու և գործելու եղանակը» (էջ 24)...

Նրապուրիչ է ձերունի մշակի անդոյ ձեռքում ծա-
ծանւող «հասարակաց պիտոյը» գրոշակը...

Նրապուրիչ է ձերունի մշակի կրճքում երիտասար-
դի աւիւնով բողբոջով մաշած սիրտը...

Ծնկաչոր յարգանք այդ ձեռքին...

Ծնկաչոր յարգանք այդ սրտին...

19 ^{XII}/₃₀ 07 [Թ.,

Մոսկւա:

ԲԺԻՇԿ ՍԻՄԷՅՈՆ ՇԱՀ-ՆԱԶԱՐԵԱՆՅԻ

Ա. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻԻՆՆԵՐ՝

1) «ՆՈՐ-ՓՈՐՁ» գրականական և հասարակական
հանդէս. տետրակ № 1 (խմբագրեց՝ Յովհաննէս Շահ-
նազարեան). էջ 128, Մոսկւա, 1897 թ., (սակաւածիւ)
զինն է 75 կ.

2) ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ «Անմեղ գործեր»
(Կանայք Գ. Չուբարի վէպիկներում). էջ 56, Մոսկւա,
1899 թ., (սակաւածիւ) զինն է 50 կ.

3) ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ «Մ. Արովեանի
գրականական և հասարակական գործունէութիւնը». էջ 23,
Մոսկւա, 1899 թ., (սակաւածիւ) զինն է 35 կ.

Բ. ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻԻՆՆԵՐ՝

1) Երէցփոխանութեան հարցը Մոսկւայում. էջ 31,
Մոսկւա, 1895 թ., (սպառւած) զինն է 25 կ.

2) Основные положения физиологической пси-
хологии по Вундту, Цигену и Мейнерту. I. Теория
апперцепции В. Вундта. Стр. 63, Москва, 1898 г.,
цѣна 75 к.

3) Ճառ Երևանի Հայոց Թեմական Հոգևոր Դպրանո-
ցին ներկայանալիս. էջ 23, Մոսկւա, 1899 թ., (սպառ-
ւած) զինն է 25 կ.

4) Երևանի Հայոց Թեմական Հոգևոր Դպրանոցի ա-
շակերտներին (մի քանի խրատներ). էջ 14, Մոսկւա,
1899 թ., (սպառւած) զինն է 20 կ.

5) Երևանի Հայոց Թեմական Հոգևոր Դպրանոցը և
Հասարակութիւնը. էջ 32, Մոսկւա, 1899 թ., (սպառւած)
զինն է 30 կ.

6) Որոշ կանոնադրութեան և ծրագրի անհրաժեշ-
տութիւնը և Հայոց Թեմական Հոգևոր Դպրանոցների
վարչական և ուսումնական կարգ ու կանոնի ղեկցիպլի-
նայի միակերպութեան գաղափարը. էջ 84, Մոսկւա,
1900 թ., (սպառւած) զինն է 1 ը.



- 7) «Մշակը-ը (25-ամեակի առթիւ) — 1896/7 թ.թ. կուսակցական պայքարը. էջ 98, Մոսկւա, 1900 թ., (սպառւած) գինն է 1 ր.
- 8) Հայ Դպրոցի ցաւերից. I. Վարչականի շուրջը. էջ XIX+44, Մոսկւա, 1900 թ., (սպառւած) գինն է . . . 40 Կ.
- 9) Մարդասիրութեան և աշխատանքի ազնիւ գինւորը՝ Իւրի Ալէքսէեւիչ Վեսելովսկի (18^{XII}/27 89 — 1899 թ.թ.). էջ 82 [Իւր. Ալ. Վեսելովսկու լուսատիպ պատկերով], Մոսկւա, 1901 թ., (սակաւածիւ) գինն է . . . 60 Կ.
- 10) Հայոց Թեմական Հոգևոր Դպրանոցների կանոնադրութեան նախագիծը. էջ XX + 172 + VIII [Կոմս Յովհաննէս Լազարեանցի լուսատիպ պատկերով և մի գունաւոր փմատիպ աղւսակով], Մոսկւա, 1902 թ., (սակաւածիւ) գինն է 1 ր.
- 11) Մի տեղեկագրի առթիւ («Համառօտ տեղեկագիր Հոգաբարձութեանս եռամեայ գործունէութեան Երևանայ Հայոց Թեմական [Հոգևոր ?] Դպրանոցի ուսումնական և տնտեսական փիճակի մասին՝ սկսած 1897—1900 ուս. ամի» [կազմեց] «Գանձապահ — Հոգաբարձու՝ Գ. Անտօնեանց»): էջ 32, Մոսկւա, 1903 թ., գինն է 30 Կ.
- 12) 1905 թւի օգոստոսի 1-ի Ուկադը և Ժամանակաւոր կանոնները. էջ XXII + 90 + VII, Մոսկւա, 1907 թ., (սակաւածիւ) գինն է 50 Կ.
- 13) Սեդրակ Մանգինեանը՝ իբր տեսուչ Երևանի Հայոց Թեմական Հոգևոր Դպրանոցի (1892 թ. սեպտեմբեր—ց 1895 լուսար). էջ IX+100, Մոսկւա, 1907 թ., գինն է 50 Կ.
- 14) Բանաստեղծ-քաղաքացին դպրոցական նւիրական ուխտի ասպարէզում. էջ 20 (Սմբատ Շահ-Ազիզի պատկերով), Մոսկւա, 1908 թ., գինն է 10 Կ.
- 15) Դպրոցների նրմական—դրամական ապահովութեան հարցը (մամուլի տակ է):

Դիմել՝

Москва, Армянский пер., 5, Д-ру С. Г. ШАХЪ-НАЗАРОВУ.
 Russie, Moscou, Armianskj per., 5, D-r S. SCHAN-NASAROFF.
 Тифлисъ, Центральная Книжная Торговля.
 Книжный магазинъ „Гуттенбергъ“.
 Баку, Книжный магазинъ „Сотрудникъ“.